# Քրիստոսի Համբարձման տոն

**Տ. ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆԻ քարոզը՝**
**խոսված Ս. Էջմիածնի Մայր տաճարում**
**2003 թ. մայիսի 29-ին**



***Մայիսի 29-ին՝ Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Սբ. Պատարագ:***

***Պատարագիչն էր Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը:***

***Համբարձման տոնին Հայ Առաքելական Եկեղեցին նշում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սբ. Էջմիածին փոխադրելու օրը, երբ Վաղարշապատի ազգային ժողովի որոշմամբ 1441 թվականին, շուրջ հազարամյա ընդմիջումից հետո, Հայրապետական Աթոռը վերահաստատվեց լուսավորչահաստատ Սբ. Էջմիածնում:***

***Ի հիշատակություն պատմական այդ օրվա եւ ի հավերժություն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի՝ հընթացս սրբազան արարողության Իջման Սբ. Սեղանի առջեւ կատարվեց Հայրապետական մաղթանք:***

*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:*

*«Սա է, որ ի գերեզմանէն յարեաւ եւ աւերեաց զդժոխս եւ վերհամբարձեալ փառօք գայ առ Հայր՝ Տէր կարող ի պատերազմի».*

*«Սա է, որ հարություն առավ գերեզմանից, ավերեց դժոխքը եւ վերհամբարձյալ փառքով գնաց Հոր մոտ՝ Տերը կարող պատերազմի»:*

«Ես հաղթեցի աշխարհին». որպես ավարտն իր առաքելության՝ այս խոսքերը հնչեցին Օտարականի շրթներից: Իր երկրավոր կյանքի պայքարը մարմնավորող այս խոսքերով կարծես մի համեստ հաղթարշավի վերջնահանդես էր պատրաստել հաղթության նշանի խաչափայտին գամված Աստծո Որդին:

«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ, որ տարբեր է այս աշխարհի տված խաղաղությունից, մի՛ խռովվեք եւ մի՛ վախեցեք»:

Մտամոլոր եւ սրտաբեկ առաքյալներին, սակայն, տանջում էր թերահավատ այն միտքը, թե ով էր այդ Օտարականը՝ խաղաղության ու սիրո մարգարեն, որ քաղցր մանանայի պես ճաշակեց քիմքը, պայծառացավ ականջալուր միտքը՝ իմաստությամբ Սողոմոնի, աստվածապատգամ խոսքերով Եսայի մարգարեի եւ երգով Դավթի ականատես դարձավ սիրտն ու հոգին՝ Պայծառակերպության ու երկնային զորաց գնդերի փառաբանությանն ու երկրպագությանը:

Դեռեւս հազարամյակներ պիտի պահանջվեն, որ արարածներս փորձենք նկարագրել փոխանց խաղաղության՝ տագնապած առաքյալներին, որոնք Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը սրտերում ծրարած՝ շտապում էին Գալիլեա, որտեղ ժամադրել էր նրանց Հիսուս:

«Խորհուրդն մեծ եւ Սքանչելին» Իր հարուցյալ մարմնով աշխարհային քառասնօրյա հրաժեշտի օրերն էր ապրում Իր փոքրաթիվ հոտի հետ, երկնային խաղաղությունն էր հովանի դարձրել՝ որպես ջրհեղեղից հետո հաշտության ուխտի կամարակապ ծիածան, Նոր ուխտով ապրելու վերջին պատգամներն էր փոխանցում առաքյալներին՝ հայտնվելով Երուսաղեմում, Էմմաուսի ճանապարհին, Գալիլեայում, Տիբերիայի լճի ափին.... մինչեւ Ձիթենյաց լեռ:

Երուսաղեմի պարիսպներից դուրս, Ոսկե քառակերտ դարպասներին դեմառդեմ, մի բարձունք է խոյանում՝ կարծես բաց կանաչագույն թավիշով զգեստավորված: Ձիթենյաց ծառերով առատ սրբավայրը դեռեւս ունի երկհազարամյա բնակիչներ, որոնք սրբատեղիներում հնչող աղոթքներին ու ծեսերին միախառնում են մեղմ թափահարող իրենց ճյուղերը՝ որպես ականատես վկաներ՝ պատմելով Քրիստոսի հրաշափառ Համբարձման դեպքը: Ուր Աստծո Որդին Իր ոտքի վերջին հետքը թողեց աշխարհի վրա եւ փառքով համբարձվեց երկինք՝ բազմելով աջ կողմում Հայր Աստծո:

Շարականագիրը փորձում է մեզ նկարագրել Քրիստոսի հրաշափառ Համբարձումը՝ ասելով. «Զարհուրեցին երկնային իշխանությունները՝ տեսնելով վերելքը Քո, Քրիստոս, խումբ առ խումբ սարսափած կրկնում էին՝ ո՞վ է սա՝ փառքերի Թագավորը»:

Դու՛ ես փառքերի Թագավորը եւ Տերը զորությունների: Ոսկե ուռիդ հարվածի լուսե շիթն է առաջնորդում մեզ 1700 տարիներ շարունակ, զարկիդ կերտվածքով տաճարի լուսե կամարակապը թեւածել է հայոց ազգին, որ ունի տեսիլք «Էջ Միածին ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»: Համբարձումից հետո երկնային զորաց լույսի փառքով իջար եւ ավետեցիր Հայոց երկիրը Քո փրկարար խորհրդով: Հայտնվեցիր հայոց Հայրապետին՝ Լուսավորչին մի ողջ ազգի, որն անգամ Պետրոսի նման չայլայլվեց Պայծառակերպությունից, այլ խոհեմորեն գործեց անսասան հավատքի ուժով՝ կերտելով Միածնաէջ այս սուրբ տաճարը եւ հաստատելով Հայրապետական Սուրբ Աթոռը Էջմիածնի:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, այսօր տոնախմբելով Համբարձման տոնը, իր տիրավանդ խորհրդին միախառնել է նաեւ հիշատակը փոխադրության հայոց Հայրապետական Սուրբ Աթոռի՝ Սսից Սուրբ Էջմիածին, որ կարծես Թովմաս առաքյալի պես իր հոգու անդորրն էր փնտրում հազարամյա աստանդական կյանքով՝ մինչեւ 1441 թվականը: Երբ իմաստուն վարդապետների եւ մեծանուն հայ իշխանաց ազգայնական գիտակցությամբ՝ արժանապատվորեն վերադարձավ իբրեւ շոշափելու Խաչյալի վերքերը, վերահաստատելով Հայրապետական Աթոռը տերունակոխ Հայոց սուրբ հողի եւ աստվածահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս երկնակերտ տաճարում:

Կյանքի հազարամյա փորձն է հայ ժողովրդին ուսուցիչ դարձել, թե՝ «Զամենայն ազգս կապեալ կա ի վերայ աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի»: Պատմության անողոք ալեկոծությունն աշխարհասփյուռ է դարձրել մեր ժողովրդին, սակայն կրկին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, որ Արարատին սպարապետ կարգած եւ Արագածի կատարին՝ Լուսավորչի կանթեղի լույսով՝ որպես անստվեր փարոս, իր շնորհազարդ Գահակալի ջահակրությամբ հովվում է ընտրյալ հոտը Միածին Որդու:

«Ուր մարմին իցէ, անդր արծուիք ժողովեսցին» («Որտեղ մարմինն է, այնտեղ էլ ժողովի են գալիս արծիվները»:

Վեհափառ Տեր եւ Սրբազնակատար Հայրապետ Ամենայն Հայոց, Ձերդ Սրբության սրբատառ կոնդակով այս տարին հռչակել եք Սուրբ Էջմիածին տաճարի օծման 1700-ամյակի տարի, տաճար, որի Միածնաէջ Սուրբ խորանին ծնկադրելու կարոտ ուխտի է գալիս հայաստանաբնակ եւ սփյուռքահայ մեր ժողովուրդը՝ իր առաջնորդների հանդիսապետությամբ: Սակայն Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի տեղափոխության, ուստի եւ նրա արժանավոր եւ աստվածընտիր գահակալիդ տոնն է այսօր: Խոնարհաբար շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը եւ աղոթակից ենք ողջ միաբանությամբ այն խուռներամ հոտին, որ ամեն կիրակի Ձերդ Սրբության հրավերով ժողովի է գումարվում Իջման Սուրբ Սեղանի եւ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռիդ շուրջ:

«Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր», փառք Քեզ, որ անկախ հայրենիքի գարնան հովիտներում շարունակում են հնչել «համբարձում յայլայի» խաղիկներն ու գուբղաները. գունագեղ ծաղիկներից ներշնչված՝ սեր են երգում, վիճակ գցում...., իրենց բախտը կապելով Նախախնամողիդ բարեհաճությանը: Հայ ժողովուրդը՝ որպես ընտրյալ ժողովուրդ, անսասան վեմ է, որի քարայրներում հարատեւությամբ հնչում են ժողովրդական երգն ու պարը, ինչպես բաբախող սիրտ, եւ աղոթքն ու փառաբանությունը՝ որպես հոգի, որոնց ներդաշնակությամբ երաշխավորվում է հավերժի ճամփան:

Քրիստոսի սէրը եւ խաղաղութիւնն ընդ մեզ, ընդ ամենեսեանս. ամէն:

# ՏՈՆ ԵՐԵՎՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ



*Սկիզբը՝ էջ 1*

Խաչը Հռոմեական կայսրության ժամանակ մահապարտներին անարգելու եւ նախատելու համար էր: Խաչելությունը ոչ միայն անպատվաբեր վախճան էր համարվում, այլեւ հին աշխարհի հայտնագործած ամենաանմարդկային եւ դաժան պատիժներից մեկն էր: Դատապարտյալին մերկ գամում էին խաչին՝ ենթարկելով զանազան մարմնական խոշտանգումների: Եվ խաչյալը տանջվում էր, արեւի կիզիչ ճառագայթներն այրում էին նրա գլուխը, անբնական վիճակից մարմինն ուռչում էր, վերքերը բորբոքվում էին՝ պատճառելով անտանելի ցավեր: Մահապարտը երկար տանջվելուց հետո ավանդում էր հոգին: Այդ ժամանակ տախտակներից շինված այդ գործիքը մահվան խորհրդանիշն էր: Հին Ուխտում էլ կարդում ենք. «Անիծված է նա, ով կախված է փայտից» (Բ Օր. ԻԱ 23), բայց մեր Տերն ու Փրկիչ Հիսուս Քրիստոս խաչի վրա հեղած Իր թանկագին արյամբ կենաց եւ օրհնության միջոց դարձրեց այն՝ «մեզ վերստին գնելով օրենքի անեծքից՝ անեծք դառնալով մեզ համար» (Գաղ. Գ 13): Աստվածորդին միացավ խաչափայտին՝ սրբագործելով այն եւ մեզ տալով «զէնն յաղթութեան» ընդդեմ սատանայի ու նրա խաբկանքների: Եթե մինչեւ Քրիստոս խաչն անարգանքի եւ նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելությամբ նրա մեջ դրվեց կյանքի խորհուրդը, եւ մարդ արարած հնարավորություն ստացավ նոր արարած լինելու. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, ապա նա նոր արարած է» (Բ Կորնթ. Ե 17): Քրիստոս խաչի վրա ներեց մեզ, մեր մեղքերի պարտամուրհակը վերացրեց մեջտեղից՝ մեխելով այն խաչափայտին:

Մարդկության փրկության համար մարմնացած Աստված խաչվեց, թաղվեց, բայց երրորդ օրը հրաշափառապես հարություն առավ մեռելներից՝ քանդելով մահվան կապանքները: Այո՛, հարություն առավ Տերը, որովհետեւ Լույսը չէր կարող գերեզմանի մթության մեջ մնալ: Եվ այս իրողությունը նկատի ունենալով է, որ սուրբ Կյուրեղ Երուսաղեմացին ասում է. «Դավանում եմ Խաչը, քանզի գիտեմ Հարությունը»: Հետեւաբար խաչը մեզ համար հույսի, սիրո, հաղթանակի եւ փրկության նշանն է, որի վրա Աստվածորդին պարտության մատնեց սատանային՝ մեր առաջ բացելով դրախտի դուռը, որը մինչ այդ փակված էր մեր նախածնողներ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով: Հիսուս խաչի վրա ցույց տվեց իր անհուն սերն ու անբավ ողորմածությունն ադամորդիներիս նկատմամբ: Միով բանիվ՝ Տերն իր փրկագործության խորհրդով խաչը վերածեց հաղթության նշանի: Եվ այս գիտակցությամբ ու խոր համոզմամբ է, որ քրիստոնեության մունետիկ Պողոսն ի լուր ամենքի ազդարարում է. «Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. Զ 14): Այո՛, տերունական նշանը ճշմարիտ քրիստոնյաներիս համար պարծանքների պարծանքն ու Աստծո անսահման սիրո արտահայտությունն է անկյալ մարդու նկատմամբ: Ճիշտ է, անհավատ ու Տիրոջը չճանաչած մարդկանց համար խաչի վրա Քրիստոսի այս զոհողությունն անիմաստ եւ անհասկանալի է թվում, բայց մեզ համար, որ մեր սրտերի մեջ ընդունել ենք ճշմարիտ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին, խաչը դարձել է փրկության գրավականը: Անգիտության խավարում խարխափող այս մարդկանց մասին է առաքյալի խոսքը. «Շատեր, որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ եւ այժմ էլ լալով եմ ասում, ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի. նրանց վախճանը կորուստն է, նրանց աստվածն իրենց որովայնն է, եւ փառքը՝ իրենց ամոթը: Նրանք միայն երկրավոր բաներ են խորհում» (Փիլիպ. Գ 18-19):

Ապավինելով խաչի զորությանը՝ մենք խափանում ենք չարը: Մենք մեզ տյառնագրում ենք եւ զորանում, նրանով զարդարում մեր հոյակերտ եկեղեցիները, նրանով կնքում մեր զավակներին, նրանով պսակվում, նրանով էլ գերեզման իջնում՝ հավիտենական կյանքի հույսով: Ինչպես Տիրոջ երկրային կյանքը խաչի մի ճանապարհ եղավ, այնպես էլ քրիստոնյաներիս համար այս ժամանակավոր կյանքը խաչի ճանապարհ է:

Մի ճանապարհ, որ անձուկ ու դժվար է, քարքարոտ ու փշոտ, բայց որի վերջնական հանգրվանը Տիրոջ խոստացած երկնային արքայությունն է: Սուրբ խաչի երեւման տոնի պարտավորեցնող պատգամն է, որ խաչակնքումը մեզ համար ոչ թե ձեւական ու մեխանիկական մի շարժում լինի, այլ ամեն անգամ տյառնագրելիս մի պահ անդրադառնանք այն մեծ ինքնազոհությանը, որ Աստված իրականացրեց խաչի վրա մեր փրկության համար: Մեր աղոթքը վերառաքենք առ ամենաբարին Աստված՝ կրկնելով սուրբ հայրերի շուրթերին բյուրեղացած սրտառուչ մաղթանքը.

*Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէր Յիսուս,*
*յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:*
*Յայնժամ մեք մի՛ ամաչեսցուք*
*յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով*
*մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէ քումմէ*
*որպէս զորդիս լուսոյ եւ որդիս տունջեան:*

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ**
**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԿՈՄԻՏԱՍ Ա ԱՂՑԵՑԻ

## (615/16-628)

Կոմիտաս կաթողիկոսը ծնվել է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի Աղցք գյուղում: Աշակերտել է Դվնի հայրապետանոցում՝ Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի աթոռակալության շրջանում, եղել է Ս. Հռիփսիմեի վկայարանի փակակալ, իսկ ավելի ուշ ձեռնադրվել է Տարոնի եւ Մամիկոնեից եպիսկոպոս՝ Աբրահամ Ա Աղբաթանեցի հայրապետի կողմից: Իր ունակությունների եւ արժանիքների շնորհիվ նա կարեւոր տեղ է զբաղեցնում բարձրաստիճան հոգեւորականության շրջանում եւ տեղ է գտնում Ամատունյաց Մաթեոս եպիսկոպոսի հետ միասին Պարսից թագավորի մոտ ուղարկված պատվիրակությունում, որի շարժառիթների մասին աղբյուրները լռում են: Ամենայն հավանականությամբ՝ ճիշտ է Մ. Օրմանյանը, որի կարծիքով՝ Պարսից արքունիքն Աբրահամ կաթողիկոսի մահից հետո արգելք էր դրել կաթողիկոսական ընտրությունների վրա: Հայոց կաթողիկոսների՝ Պարսից թագավորների կողմից հաստատվելն ընդունված կարգ էր՝ Սահակ Պարթեւի ժամանակներից սկսած. այնպես որ Կոմիտաս եպիսկոպոսը գալիս է Տիզբոն եւ հաստատվում կաթողիկոսական աթոռին: Հասկանալի է, որ ստանալով Պարսից արքայից արքայի հաստատումը՝ Կոմիտաս եպիսկոպոսը մինչ այդ, եթե հայերի կողմից չէր էլ ընտրվել հայրապետ, ապա ձեռք էր բերել բարձրաստիճան հոգեւորականության եւ իշխանական դասի հավանությունը: Սմբատ Բագրատունու՝ Պարսից արքունիքում ունեցած մեծ հեղինակությունը նպաստեց խնդրի դրական լուծմանը:

Արդեն որպես կաթողիկոս՝ Կոմիտաս Ա-ն ուղղափառ դավանության մասին «Հաւատոյ գիր» վերտառությամբ ընդարձակ փաստաթուղթ է ներկայացնում Պարսից ժողովին՝ ստորագրելով այն որպես Մամիկոնեից եպիսկոպոս, որը հաջորդել է Մեծ Հայքի կաթողիկոսության աթոռին: Ըստ երեւույթին՝ նման ստորագրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կոմիտասը դեռեւս նվիրապետական կարգով չէր օծվել կաթողիկոս: Հայոց հայրապետը «Հաւատոյ գիրը» պատրաստեց Պարսկաստանի եւ Ասորեստանի եպիսկոպոսների խնդրանքով, որոնցից հինգի անունները հիշվում են հիշյալ փաստաթղթում: Վերջինս նպատակ ուներ Պարսից արքունիքում գտնվող հայ նախարարների եւ տարբեր ազգերի քրիստոնյաների ծանոթացնել Հայոց եկեղեցու վարդապետությանը, ինչպես նաեւ նզովում էր շուրջ երեք տասնյակ այլեւայլ աղանդավորների, որոնց մեջ էին Եվտիքեսը, Սեւերոսը, Գայինոսյանները, ինչպես նաեւ Քաղկեդոնի ժողովի որոշումները: Անտարակույս, Պարսից ժողովին ներկայացված՝ Կոմիտասի նշված փաստաթուղթը, որը համակողմանի բացատրություններ էր տալիս Հայոց վարդապետության վերաբերյալ, էական նշանակություն ունեցավ ժողովի որոշումների համար:

Մ. Օրմանյանը Կոմիտաս Ա-ի աթոռակալությունը դնում է 616 թվականից, սակայն հակված է կարծելու, որ նրա ընտրությունը տեղի է ունեցել դեռեւս 615 թվին: Պատմագիրները եւ այլեւայլ գավազանագրքերը նրա հայրապետության շրջանը հաշվում են 8 տարի, եւ միայն Միխայիլ Ասորին նշանակում է 26 տարի, եւ այդ էլ, հավանաբար, գրիչների սխալի պատճառով: Ուստի, եթե առաջնորդվենք 8 տարվա հաշվարկով, ապա Կոմիտաս Ա-ի աթոռակալությունը կարող է ընկնել 615/616-623/624 թթ.: Սակայն դրան հակասում է Սեբեոսի այն տեղեկությունը, թե Վարազշիրոց մարզպանի Հայաստան ժամանելու շրջանում Կոմիտաս կաթողիկոսը մահացել էր: Եվ քանի որ Վարազշիրոցը մարզպան էր կարգվել Կավատ արքայի կողմից, իսկ վերջինս էլ գահ էր բարձրացել 628 թվականին, ապա լրիվ հնարավոր է, որ կաթողիկոսը մահացել էր նրա՝ երկիր գալուց ոչ շատ առաջ: Այդ դեպքում Կոմիտասի աթոռակալության շրջանը պետք է հաշվել ոչ թե 8, այլ 13 տարի: Այսուհանդերձ՝ չի բացառվում, որ հայրապետական աթոռը Պարսից արքունիքի բռնած դիրքի պատճառով մի քանի տարի թափուր էր, եւ Կոմիտաս Ա կաթողիկոսն իրականում աթոռակալել էր ընդամենը 8 տարի:



Կոմիտաս Ա-ն աթոռակալեց Պարսից Խոսրով Փարվեզ եւ բյուզանդական կայսր Հերակլի գահակալության եւ պարսկա-բյուզանդական բուռն պատերազմների շրջանում: Սկզբում հաջողությունն ուղեկցում էր պարսկական զորքերին, որոնք կռիվներ էին մղում Ասորիքի եւ Փոքր Ասիայի կողմերում: Հայաստանի պարսկական եւ բյուզանդական հատվածները, որ պարսկական բանակների հաջող գործողությունների շնորհիվ գործնականում միավորվել էին, որոշ ժամանակ հարաբերական անդորր ապրեցին, որը մեծապես նպաստեց հայ մշակույթի եւ մասնավորապես՝ ճարտարապետության բուռն զարգացմանն ու վերելքին: Ծանր կացության մեջ հայտնված կայսրությունը՝ հանձինս Հերակլ կայսեր, ձգտում էր լեզու գտնել Պարսից արքայի հետ եւ քիչ թե շատ տանելի պայմաններով հաշտություն կնքել, սակայն այդ միայն մեծացնում էր պարսիկների հավակնությունները եւ հոխորտանքը, իսկ բյուզանդական բնակչությունն էլ, դրանից հիասթափված ու զայրացած, կայսրին մեղադրում էր թույլ վարքագծի համար:

Սպառելով պարսիկների հետ համաձայնության գալու բոլոր հնարավորությունները եւ հասկանալով, որ խնդիրը միայն ռազմական լուծում ունի, կայսրը, աթոռակից հռչակելով իր որդուն՝ Կոստանդինին, եւ նրան հանձնելով իշխանությունը մայրաքաղաքում, անձամբ ստանձնեց դեպի արեւելք արշավի դուրս եկած զորքերի հրամանատարությունը: 622 թ. ապրիլի 4-ին տոնելով Զատիկը՝ Հերակլը շարժվեց Քաղկեդոն, իսկ մի բանակ էլ նավերով ուղարկեց Կիլիկիայի ափերը՝ պարսկական զորքերի թիկունքը դուրս գալու համար:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Այն ծնվեց 1918 թ. մայիսի 28-ին եւ ասպարեզը թողեց 1920-ի նոյեմբերի վերջին: Ապրեց ընդամենը երկուսուկես տարի, որը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանի շարունակությունն էր:

Հանրապետությունը, այսպիսով, ծնվեց ծանր ու աղետալից մի ժամանակ, երբ երկիրը քրքրված ու քայքայված էր, ժողովուրդը կիսակործան ու համարյա անհեռանկար: Նրա ծննդի վկայականն Ազգային խորհրդի անունից հրապարակվել էր Թիֆլիսում, եւ նոր կառավարության շատ անդամներ էլ մտածում էին, որ իրենք այդ օրի հասած Հայաստանը պիտի ղեկավարեն Թիֆլիսից:

Վերջապես, երբ կազմված էր կառավարության կորիզը (վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործոց նախարար՝ Ալ. Խատիսյան, ներքին գործոց նախարար՝ Ա. Մանուկյան, ելեւմտական նախարար՝ Խ. Կարճիկյան, զինվորական նախարար՝ Հ. Հախվերդյան), Ազգային խորհրդի ու կառավարության՝ հուլիսի 13-ին գումարած միացյալ նիստում Հովհաննես Քաջազնունին, դաշնակցականների միահամուռ պաշտպանությամբ, դրեց Երեւան փոխադրվելու, այնտեղ «մեր սեփական տանն» ապրելու եւ գործելու առաջարկությունը: Հակառակ դեպքում, սպառնում էր նա, ինքը կհրաժարվի վարչապետի պարտականություններից:

Հովհաննես Քաջազնունին՝ ժամանակի դաշնակցության ամենաշրջահայաց գործիչներից մեկը, իր սեփական ու համառ կարծիքն ուներ նաեւ կառավարության կազմի մասին: Նա գտնում էր, որ միայն կոալիցիոն-դեմոկրատական կառավարությամբ, բոլոր կուսակցությունների, աշխատավորական բոլոր խավերի միահամուռ ու միաձույլ եռանդով հնարավոր կլինի երկիրը հանել քայքայված-քաոսային վիճակից:

Եվ հուլիսի 17-ին կառավարությունն ու Ազգային խորհուրդը մեկնեցին Երեւան, տեղ հասան 19-ին:

Կառավարության առկայությունը կյանք էր ներարկել մեռնող երկրին, ժողովուրդը խլրտում էր իրեն տրված հողն ու օջախը ծաղկեցնելու համար: Ժողովուրդը, որ բոլոր ժամանակներում էլ պատրաստ է վերածննդի ու բնական զարգացման, խաղաղ աշխատանքի եւ մեծ հաղթանակների: Ասում են, երբ Խորհուրդն առաջին նիստից հետո սպարապետ Նազարբեկյանի գլխավորությամբ կազմակերպել էր զորահանդես, եւ զինական նոր, բայց խրոխտ շարքերի վրա ծածանվել է հայոց դրոշակը, փողոցներ ելած հայությունը ցնծություն է ապրել, մարդիկ արտասվել են ուրախությունից. Հայոց նոր պետությո՜ւն, խորհրդարա՜ն, կառավարությո՜ւն, զորք ու դրոշա՜կ... Ի՜նչ իրականություն պիտի բացվեր, ինչպիսի՜ ճանապարհ, ի՜նչ բաղձալի հեռանկար...

Գործի գլուխ կանգնածները, կարծես, գիտեին էլ, թե ինչպե՛ս պիտի հասնեին այդ հեռանկարին: Ահա խորհրդարանի առաջին նստաշրջանում (1919 թ. օգոստոսի 10-ին) հաստատած ծրագրային խնդիրներից մի քանիսը:

«Ժողովրդական լուսավորության գործի մեջ կառավարությունը պիտի ղեկավարվի հետեւյալ սկզբունքով՝ ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթություն:

«Արտաքին քաղաքականության մեջ կառավարությունը հավատարիմ պիտի մնա նույն քաղաքականությանը, որին հարած է եղել մինչեւ այժմ հայ ժողովուրդը... Միաժամանակ կառավարությունը պիտի ջանա ստեղծել բարեկամական փոխհարաբերություններ հարեւան պետությունների հետ եւ փոխադարձ համաձայնությամբ կարգավորել Հայաստանի սահմանների հարցը, որ հանդիսանում է միակ պատճառը շարունակական դժգոհության եւ թյուրիմացության: Ոչ մի դեպքում սահմանային վեճերը Հայաստանի եւ հարեւան պետությունների միջեւ չպիտի լուծվեն զենքի ուժով:

«Կառավարությունը մեր երկրի ներսում ձգտում է Հայաստանի հանրապետության դեմոկրատական նպատակներին՝ աշխատելով իրականացնել բոլոր քաղաքական ազատությունները. այդ բանի համար կառավարությունը հիմնական բարեփոխումների է ենթարկում վարչական ամբողջ կազմը՝ ձգտելով ազգայնացնել այն՝ մայրենի լեզուն գործածության մեջ մտցնելով...

«Կառավարությունը պիտի իրականացնի կալվածատիրական, վանքապատկան եւ, մանավանդ, գինեգործական բոլոր հողերի ազգայնացումը, պիտի բաժանի այդ հողերը սակավահող գյուղացիությանը՝ ըստ աշխատանքի նորմայի եւ կարիքի:

«Կառավարությունն ամեն կերպ պիտի աջակցի կոոպերատիվներին, ամեն տեսակի միություններին՝ այս ձեւով խրախուսելով ժողովրդական նախաձեռնությունը գյուղատնտեսության եւ տնայնագործական արդյունաբերական վարկի շրջանում:

«Արդարադատության գործն ամուր հիմքի վրա դնելու համար կառավարությունը մտցնում է դատարաններում ընտրական սկզբունքը... Գործավարությունը դատարանում պետք է տարվի պետական լեզվով, դատավարությունը՝ մայրենի»:

Պիտի հաջողե՞ր իրականացնել այս ժողովրդավարական գեղեցիկ ծրագիրը: Մասամբ միայն, որովհետեւ լրիվ իրականացնելու համար տեւական խաղաղություն էր պետք, որից հանրապետությունը զրկված էր իր գոյության երկուսուկես տարվա ամբողջ ընթացքում: Բավական է հիշել, որ Թուրքիայի հարեւանությունը մի կողմից, Ադրբեջանինը՝ մյուս, միշտ էլ բախումների ու պատերազմների էր հանգեցնում: Նույնիսկ Վրաստանը, որ, թվում է, միայն բարեկամական հարաբերությունների մեջ պիտի լիներ, իր զորքը մտցրել էր Լոռի, տիրել այն, եւ հարկ եղավ պատերազմ հայտարարել ու զենքի ուժով ազատագրել Հայաստանի ավանդական այդ հողը:

Հանրապետության տարածքի ծավալման տեսակետից առաջին տարվա վերջում բավական նպաստավոր էին միջազգային հարաբերությունները: Անգլիացիները, որ մինչ այդ մահմեդականների շահերն էին պաշտպանում, հիմա նույնիսկ իրենց զորքերը տրամադրեցին, որպեսզի արեւմտահայկական մարզերի վրա տարածվեն Հայաստանի հանրապետության իրավունքները:

Եվ, այսպե՛ս, հանրապետությանն էր միացվում Արաքսի աջափնյակի բավական մեծ մի տարածություն՝ Կարսի շրջաններից մինչեւ Իգդիր...

Ասես դուռ էր բացվում դեպի Արեւմտահայաստանի խորքերը... Մնում էր ամուր ոտք դնել այդ եզերքներում, յուրացնել հողը, վերականգնել տնտեսությունը՝ այստեղ վերաբնակեցնելով գաղթականներին, որոնք սփռված էին Արաքսի ձախ ափին, Անդրկովկասի մյուս մասերում ու հյուսիսային Կովկասում:

Սակայն այս հողերի վերաբնակեցումը, մշակումն ու շենացումը համարյա անհնար եղավ, քանի որ դրանց համար մեծ միջոցներ էին պետք, որ հանրապետությունը չուներ, եւ դարձյալ հանգիստ խաղաղություն, որ Թուրքիայի միջամտությամբ ու գործակալների մշտական ներկայությամբ դառնում էր անհնար:

Այսքանից հետո՛ անգամ հանրապետությունը կարող էր հպարտանալ կենսագործված մի շարք միջոցառումներով. գյուղատնտեսական կյանքում տեղի էին ունեցել էական վերափոխումներ. նախկին ընչազուրկ մարդիկ հողի տեր էին դարձել, եռանդով մշակում էին այն, հիմք էր դրվել խաղողագործական առաջավոր տնտեսությունների: Ստեղծվել էին գյուղատնտեսական հումքը մշակող գործարաններ, եւ, վերջապես, մշակութային կյանքի արմատավորման ու զարգացման նախադրյալներ էին ստեղծվել. արտահայաստանյան հայ նշանավոր գործիչները եկել, ծառայում էին հարազատ ժողովրդին: Ծայրագույն պայմաններում, 1919 թ. մայիսի 16-ին, կառավարության որոշմամբ հիմնադրվեց համալսարանը, եւ, որովհետեւ Երեւանում այն նույնիսկ տեղավորելու հնարավորություն չկար, առաջին տարին գործեց Ալեքսանդրապոլում (Գյումրի):

Հանրապետությանը վիճակված չէր երկար կյանք ունենալ: 1920 թ. ապրիլին խորհրդային զորքերը մտան Ադրբեջան եւ, տեր դառնալով Արցախին, սպառնացին գրավել նաեւ Հայաստանի սահմանակից գավառները:

Նույն տարվա հոկտեմբերի 30-ին էլ թուրքերը մտան Կարս եւ առաջ շարժվելով հասան Ալեքսանդրապոլ:

Սակավուժ հանրապետությունը ո՛չ թուրքերի դեմ կարող էր աջողակ պատերազմ մղել, ո՛չ էլ, հատկապես, դիմակայել Այսրկովկասում անպայման սփռվելիք խորհրդային կարգերին: 1920 թ. դեկտեմբերի 2-ին հանրապետության կառավարությունը որոշեց հրաժարվել իշխանությունից՝ կամավորապես այն հանձնելով կոմունիստներին:

*Բագրատ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր*

# Քրիստոնեական սրբարանների հիմնադրումը *եւ հայոց մկրտությունը*



Սուրբ կույսերի վկայարանների եւ Աստծո անվան տաճարի կառուցման մասին ամենայն մանրամասնությամբ պատմել է Ագաթանգեղոսը՝ Ս. Էջմիածնի տեսիլքի մեկնությունում: Ս. Գրիգոր Լուսավորիչն իր բուժմանը սպասող մարդկանց կոչ արեց շինել վկայարաններ, քանզի տեսիլքով նրան ցույց էր տրվել կենաց եւ փրկության ճանապարհը: Ս. Գրիգորի հրամանով սկսեցին արագորեն պատրաստել շինվածքի նյութը: Վաղարշապատը լցվեց շինարարական աղմուկով: վկայարանների տեղերում կուտակում էին վեմ, քար, աղյուս, մայրի փայտ:

Պատմիչի խոսքով՝ ինքը՝ Սուրբ Գրիգորը, շինարարության ճարտարապետն էր եւ շինարարների «ճարտարապետության լարը ձեռքն առնելով՝ երանելիների վկայարան-հանգստարանների հիմքերն էր պատրաստում», քանզի ձգտում էր շինվածքի կառուցումն ավարտել գեղեցկադիր ու հարմար հիմքերի վրա: Շինարարությանը մասնակցում էին ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք՝ «ըստ իրենց կանանցի տկար ուժի», եւ բոլորն էլ գործը կատարում էին հավատքով ու մեծ երկյուղով, որպեսզի ոչ ոք չլինի անմասն մնա փրկության շնորհներից եւ չզրկվի բժշկությունից»:

Երեք վկայարան կանգնեցրին. մեկը՝ Վաղարշապատի հյուսիսարեւելյան կողմում, ուր նահատակվեց Հռիփսիմեն՝ իր երեսուներկու ընկերուհիներով, մյուսը՝ քաղաքի հարավային կողմում՝ Գայանեի եւ նրա երկու ընկերուհիների նահատակության վայրում, իսկ մի ուրիշը՝ հնձանի մոտ՝ այգու մեջ, ուր նրանց կացարանն էր: Այդ վայրերը զարդարեցին ոսկե ու արծաթե լուսավոր կանթեղներով, վառ լապտերներով ու հրաբորբոք աշտանակներով:

Ս. Գրիգորը հրամայեց յուրաքանչյուր նահատակված կույսի համար արկղի նման տախտակամած, մայրափայտե, բեւեռապինդ ու երկաթագամ տապան շինել եւ դնել հնձանի դռան մոտ: Նա հնձան մտավ եւ սրբուհիներին առնելով՝ յուրաքանչյուրին իր հանդերձներով տապանի մեջ դրեց եւ իր կազմությամբ ամրացրեց ու կնքեց Քրիստոսանշան կնիքով:

Ագաթանգեղոսի նկարագրությամբ՝ Հայոց Տրդատ Մեծ թագավորը, արքայազունները, նախարարները, ազատները եւ ամբողջ զորքը՝ ամեն մեկն առանձին-առանձին բերում էր անուշահոտություններ ու ազնիվ խունկ, տապանքի գույնզգույն նարոտներ ու մետաքսահյուս ոսկեթել կերպասներ: Իսկ կանայք՝ Աշխեն թագուհին, թագավորազուն օրիորդները, պատվականների կանայք եւ մեծամեծների դուստրերը, սրբերի համար բերում էին ծիրանի, ոսկեհյուռ դիպակ եւ երկնագույն ու ձյունասպիտակ հանդերձներ: Այդ ամենը ոսկու, արծաթի ու կտավի հետ կուտակում էին հնձանի դռան առջեւ:

Ս. Գրիգորը դուրս եկավ հնձանից, տեսավ այդ եւ ասաց. «Այս ամենը թող արքունական գանձարանում պահված մնա, մինչեւ որ Աստ-



վածային բարերար կարգադրությամբ ձեզ հովիվ ու վարդապետ տրվի... Եվ այդ ամենը ընտրված քահանայապետի ձեռքով ի սպաս կդրվի Աստծու փառավորընկալ զոհասեղանի ծառայությանը»: Նա կոչ արեց նահատակված կույսերից յուրաքանչյուրին իր հանգիստը մասուցել:

Տրդատ թագավորը, Աշխեն թագուհին, թագավորի քույրը՝ Խոսրովիդուխտը, իրենց օգնականների հետ մասնակցեցին տաճար-հանգստարանների ներսում՝ սրբերի թաղման տեղերում, փոսեր փորելու գործին: Աշխեն թագուհին եւ Խոսրովիդուխտը, բրողների նման, իրենց հանդերձի մեջ վերցնելով հողը, դուրս էին թափում:

Ի լրումն այս ամենի, ինչպես վիպականորեն ներկայացրել է Ագաթանգեղոսը. «Եկավ թագավորը հրաժեշտ խնդրեց սուրբ Գրիգորից յոթնօրյա ճանապարհ գնալու բարձր լեռ Մասիսն ի վեր: Այստեղ լեռան գլխից առնելով կարծր, անտաշ, անկոփ, խոշոր, ծանր, երկայն, հաստ ու մեծամեծ քարեր, որոնցից մեկը ոչ ոք չէր կարող շարժել, թեկուզեւ մարդկանց բազմությունը: Արդ՝ հսկայազորը հայկաբար վերցնելով ութ քար, դրեց իր թիկունքի վրա եւ բերեց տաճարների վկայարանները:... Շինելով, կազմելով՝ երեք սուրբ վկայարանները շտկեցին, զարդարեցին, կարգով ու կանոնով հարդարեցին: Սուրբ Գայանեին իր երկու նահատակ ընկերուհիների հետ դրեցին հարավային կողմը՝ տաճարի վկայարանում: Նույնպես եւ երանելի Հռիփսիմեն երեսուներկու ընկերուհիներով արեւելյան կողմը շինված տաճարում դրվեց, իսկ մենավորը, որ հնձանի մեջ սպանվեց, սրա տաճարը գտնվում էր քաղաքի հյուսիսային կողմում: Միասին հավաքված բոլոր սրբերը՝ Քրիստոսի խաչազգեաց վկաները մեկ առ մեկ տեղափոխվեցին իրենց մարտիրոսական բնակության համար շինված գերեզմանները: Կատարվեց ըստ նախապես Գրիգորին երեւացած տեսիլքի համաձայն»:

Հետագայում նահատակ կույսերի վկայարանների տեղերում եկեղեցիներ կառուցվեցին: Սուրբ Հռիփսիմե եկեղեցին 618 թվականին հիմնադրեց Կոմիտաս Ա Աղցեցին (615-628), Սուրբ Գայանե եկեղեցին 630 թվին՝ Եզր Ա Փառաժնակերտցին (630-641), Շողակաթ եկեղեցին՝ Նահապետ Ա Եդեսացին (1691-1705) 1694 թվականին՝ հին շինության հիմքի վրա:

Ամփոփելով վկայարանների կառուցման՝ Սուրբ Գրիգորի կատարած աշխատանքի մասին իր խոսքը՝ Ագաթանգեղոսը հաղորդել է, որ «Խորաններից ներս սրբերի տապանների հանգստարանների վրա, զոհասեղանների տեղը, երեք վկայարաններում, ամեն մեկի համար տերունական խաչի սուրբ նշանը կանգնեցրեց»:

Այս ամենից հետո Սուրբ Գրիգորը Տրդատ թագավորի ու ամբողջ ժողովրդի հետ մեկտեղ գնաց այն տեղը, ուր Ս. Էջմիածնի տեսիլքում ցույց էր տրված հրեղեն սյունը՝ ոսկի խարսխի վրա: Ըստ տեսիլքի մեկնության՝ ոսկե խարիսխը հաստատության անշարժ վեմն է, հրեղեն սյունը՝ Աստծու տունը՝ Ս. Էջմիածինը: Ս. Գրիգորն այնտեղ եւս կանգնեցրեց փրկչական խաչի նշանը, որպեսզի ամեն ոք, որ այնտեղ հասնի, ամենազոր Արարչին՝ Աստծուն երկրպագելով՝ ծունկ դնի: Աստծու տան աղոթավայրում Սուրբ Գրիգորը մեծ աղոթքով ու պաղատանքով բոլորին բժշկեց:

*Շարունակությունը՝ 6*

# ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶ
## ԵՐԱՆԻՆԵՐ
### Պարզ մեկնություններ պատանիների համար

Մի անգամ, երբ Հիսուսը դարձյալ շրջապատված էր բժշկվելու կամ պարզապես Նրա խոսքերը լսելու համար տարբեր վայրերից եկած մեծաքանակ ժողովրդով, բարձրանում է մի լեռ: Այստեղ մի տափարակ տեղ նստում է, եւ Նրա աշակերտները մոտենում ու շրջապատում են Նրան: Հիսուսը նայում է Իր աշակերտներին, ապա բազմաքանակ ժողովրդին, որ հավաքվել էր Իր շուրջ, եւ սկսում է ուսուցանել: Այստեղ արտասանված Նրա խոսքերը հայտնի են «Լեռան քարոզ» անունով: «Լեռան քարոզը» Տեր Հիսուսի գլխավոր քարոզն է, քանի որ այստեղ է Նա սովորեցրել համարյա բոլոր կարեւոր առաքինությունները, որոնք անհրաժեշտ են քրիստոնյային ճիշտ եւ Աստծուն հաճելի կերպով ապրելու համար: «Լեռան քարոզը», կարելի է ասել, քրիստոնեական կյանքի մի փոքրիկ, բայց բովանդակալից դասագիրք է: Այն գրի են առել Մատթեոս առաքյալը եւ Ղուկասը *(Ղուկասը Պողոս առաքյալի ընկերն էր, մասնագիտությամբ՝ բժիշկ: Գրել է 4 Ավետարաններից մեկը եւ «Գործք առաքելոց» գիրքը) իրենց Ավետարաններում (Մատթեոսի Ավետարան, 5-7-րդ գլուխներ, Ղուկասի Ավետարան, 6-րդ գլուխ):*

«Լեռան քարոզի» առաջին մասը կոչվում է «Երանիներ»: Այդպես է կոչվում, որովհետեւ այստեղ Տեր Հիսուսն այս կամ այն անձին երանի է տալիս, եւ այս մասի նախադասություններից յուրաքանչյուրը սկսվում է «երանի» բառով: Սովորաբար այդ նախադասություններից յուրաքանչյուրը հենց այդպես էլ կոչվում է՝ «երանի»:



**«Երանիները» հետեւյալն են.**

*Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը:*

*Երանի՜ սգավորներին, որովհետեւ նրանք կմխիթարվեն:*

*Երանի՜ հեզերին, որովհետեւ նրանք երկիրը կժառանգեն:*

*Երանի՜ արդարության քաղցն ու ծարավն ունեցողներին, որովհետեւ նրանք կհագենան:*

*Երանի՜ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմություն կգտնեն:*

*Երանի՜ սրտով մաքուրներին, որովհետեւ նրանք Աստծուն կտեսնեն:*

*Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծո որդի կկոչվեն:*

*Երանի՜ արդարության համար հալածվողներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը:*

*Երանի ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ Իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար բան ստելով ասեն: Ցնծացե՛ք եւ ուրա՛խ եղեք, որովհետեւ ձեր վարձը շատ է երկնքում. որովհետեւ այսպես հալածեցին նաեւ ձեզանից առաջ եղած մարգարեներին:*

Ամեն բարի գործի դիմաց մարդ Աստծուց վարձ է ստանում. այդ վարձը դրամ չէ եւ ոչ էլ որեւէ այլ նյութական բան: Այդ վարձն Աստծո օրհնությունն է: Երբ Հիսուսն ինչ-որ մեկին երանի է տալիս, ապա դրանով Նա օրհնում է նրան, կամենում ասել, որ այդ մարդն օրհնության է արժանի: Իսկ Աստծո օրհնությունը մարդուն պարգեւում է խաղաղություն, ուրախություն եւ երջանկություն:

Առանց Աստծո օրհնության մարդը չի կարող լինել երջանիկ: «Օրհնել» նշանակում է բարիք մաղթել: Եթե բարիքը մաղթում է Աստված, ապա Նա նաեւ տալիս է այն, քանի որ աշխարհում եւ ամբողջ տիեզերքում հնարավոր չէ գտնել այնպիսի բարիք, որն Աստված չունենա եւ չկարողանա տալ: Բոլոր բարիքների տերն էլ Աստված է եւ տալիս է դրանք, ում կամենում է: Երբ մարդը տկար է, Աստծուց ուժ է ստանում, երբ տխուր է, Աստված նրան ուրախություն է պարգեւում, երբ գտնվում է հուսահատ վիճակում, Աստված նրան հանում է այդ վիճակից, հույսի դուռ բացում, երբ ուտելու հաց չունի կամ ցրտից պաշտպանվելու համար հագուստ, Աստված նրան տալիս է այն ամենը, ինչի կարիքը նա ունի, երբ մարդ Աստծուն հաճելի ու բարի գործ է անում, Աստված նրան հաջողություն է պարգեւում: Ահա սրանք բոլորն Աստծո բարիքներն են:

Տեր Հիսուսը «Լեռան քարոզում» երանի է տալիս հոգով աղքատին, սգավորին, հեզին, ողորմածին, սրտով մաքուրին եւ այլն՝ խոստանալով տալ նրանց երկնքի արքայություն, մխիթարություն, Իրեն տեսնելու եւ Աստծո որդի կոչվելու պատիվը եւ այլ հոգեւոր բարիքներ: Իսկ որպեսզի պարզ դառնա, թե ովքեր են հոգով աղքատը, սգավորը, հեզը եւ երանության մյուս արժանացածները կամ ինչ են նրանց պարգեւները՝ երկնքի արքայությունը, մխիթարությունը եւ այլն, այժմ առանձին-առանձին կխոսենք յուրաքանչյուր «երանիի» մասին:

#### ԵՐԱՆԻ ՀՈԳՈՎ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ

Առաջին երանին վերաբերում է հոգով աղքատներին: Հոգով աղքատը խոնարհն է: Խոնարհությունն այնքան մեծ առաքինություն է, որ ովքեր այն ունենում են, նմանվում են հենց Քրիստոսին: «Ավետարանում» մի ուրիշ տեղ Քրիստոսն ասում է. *«Սովորե՛ք Ինձանից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ»:*

Աստված ամեն մարդու չէ՛, որ օրհնում է եւ բարիքներ պարգեւում: Եթե մեկն Աստծուն ոչ հաճելի արարք թույլ տա, Աստված ինչպե՞ս կօրհնի նրան: Իսկ խոնարհությունն այնպիսի առաքինություն է, որ առանց նրա մարդ ինչ բարի գործ էլ կատարի, չի կարող Աստծուն հաճելի լինել: Եթե, օրինակ, մի բարի գործ է անում եւ պարծենում է կամ իր սրտում հպարտանում, Աստված համարում է, թե նա ոչ մի բարի բան էլ չի արել: Իսկ երբ մարդ բարի գործ է անում եւ հասկանում է, որ առանց Աստծո օգնության ինքն այդ գործն անել չէր կարող, սա խոնարհություն է, եւ Աստված էլ հենց այս մարդու արած բարի գործն է հավանում եւ գործողին օրհնում:

**Ի՞նչ է խոնարհությունը:**

Երբ մեծամիտ չենք, մեծախոս չենք, մեզ ավելի լավը չենք համարում, քան ուրիշներին, այլ բոլորի մեջ տեսնում ենք բարի հասկություններ, իսկ վատը տեսնելիս ոչ թե մարդուն արհամարհում ենք կամ ատում, այլ ցավ զգում նրա համար, սա խոնարհություն է:

Երբ մեր անձը չենք ցուցադրում, ինքներս մեզ չենք գովաբանում, իսկ ուրիշներին քննադատում, երբ կոպիտ պատասխաններ չենք տալիս, չենք հայհոյում, հակաճառում, կռիվներ անում, կոպտում, սա խոնարհություն է:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Քրիստոնեական սրբավայրերի հիմնադրումը եւ հայոց մկրտությունը



Սկիզբը՝ էջ 5

Ինչպես Ագաթանգեղոսն է պատմում, Հայաստան աշխարհի զանազան կողմերից մարդիկ գալիս հասնում էին Քրիստոսի գիտության շնորհների բացված աղբյուրը՝ Սուրբ Էջմիածին, «քանզի Արարատյան նահանգում, թագավորանիստ կայանում Հայոց Թորգոմյան տանը բխեցին Աստծու պարգեւների Ավետարանի քարոզության շնորհները»:

Տրդատ Մեծն ընդունեց քրիստոնեական հավատքը, եւ նրա հրամանով Հայոց աշխարհի բոլոր կողմերից Վաղարշապատ եկան Հայոց զորքը՝ իր զորավարներով, մեծամեծները, կուսակալները, գավառապետները, նախարարները, ազատները, դատավորները: Հայոց թագավորը դիմեց բոլորին հետեւյալ խոսքերով. «Եկեք փութանք Աստծու կողմից մեզ տրված կյանքի առաջնորդին՝ Գրիգորին, հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ լուսավորի եւ վերանորոգի մեր Արարիչ Աստծու ամենուսույց խորհրդով»: Սուրբ Գրիգորը խոնարհության վեհ զգացումով պատասխանեց. «Չեմ կարող համբերել, դիմանալ անչափ բարձրությանը, քանզի անպատում է Քրիստոսատուր փառքի առաջնորդության պատիվը՝ միջնորդ դառնալու Աստծու եւ մարդկանց միջեւ, այլ թող արժանի մարդու որոնեն, գտնեն»: Իսկ երբ Աստծու հրեշտակը տեսիլքի մեջ երեւաց եւ ասաց Սուրբ Գրիգորին. «Քրիստոսից է այդ հրամայված քեզ», նա գոչեց. «Աստծու կամքը թող կատարվի»:

Սուրբ Գրիգորն արդեն որպես քահանայապետ՝ եպիսկոպոսապետ շրջում էր Հայոց աշխարհում՝ քարոզելով Ավետարանը: Տրդատ թագավորը Վաղարշապատ քաղաքից իր զորքով, Աշխեն տիկնոջ եւ իր քույր Խոսրովիդուխտի հետ գնաց Բագավան, ուր նրանց միացավ Սուրբ Գրիգորը, եւ նրանք միասին գնացին սրբազան Նպատ լեռան ստորոտը: Երբ լրացավ պահքի ժամկետը, Ս.Գրիգոր Լուսավորիչը լուսաբացին բոլորին տարավ Արածանիի ափը եւ այնտեղ ամենքին մկրտեց հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու:

Այն պահին, երբ բոլոր մարդիկ ու թագավորը իջնում էին այնտեղ՝ Արածանիի ջրերի մեջ մկրտվելու, ինչպես նկարագրել է Ագաթանգեղոսը, «Աստծուց սքանչելի հրաշք երեւաց, քանզի գետի ջրերը կանգնելով ետ դարձան: Լուսավոր սյան նման սաստիկ լույս երեւաց եւ կանգնեց ջրերի վրա ու նրա վրա տերունական խաչի կերպարանքը. եւ լույսն այնքան ծագեց, մինչեւ որ արգելեց ու նվազեցրեց արեգակի ճառագայթները: Օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ շրջան կատարելով՝ մարդկանց շուրջն էր պտտվում: Ամենքը զարմացած օրհնություն էին տալիս ի փառս Աստծու: Օրվա երեկոյան հրաշքն աներեւույթ եղավ, եւ նրանք դեպի վեր՝ ավան վերադարձան: Նրանք, որ այն օրը մկրտվեցին, ավելի քան տասնհինգ բյուր էին արքունական զորքից»:

Այսպիսով, 301 թվականին Հայոց հնագույն սրբավայր Բագավանի մոտ՝ սրբազան Նպատ լեռան լանջերից հոսող Արածանիի ջրերում, Ս. Գրիգորը մկրտում է Տրդատին, արքունիքի անդամներին եւ բյուրավոր հայերի: Աշխարհում առաջինը Հայաստանում քրիստոնեական հավատն ընդունվեց որպես պետական կրոն: Հայոց մկրտությունը մեծ տոն էր, քանզի համաձայն Ագաթանգեղոսի՝ «Ելան այնտեղից մեծ ցնծությամբ, պիտակ հանդերձներով, սաղմոսներով ու օրհնություններով, վառ կանթեղներով ու մոմերով եւ լուսավառ ջահերով, մեծ ուրախությամբ եւ սաստիկ զվարթությամբ, լուսավորված ու հրեշտակացած: Աստծու որդեգրի անունն ստացած մտան սուրբ Ավետարանի ժառանգությունը եւ սրբերի



վիճակին խառնվելով, Քրիստոսի անուշ հոտով ծաղկելով, վեր ելան, տերունական տունը դարձան: Այնտեղ Գրիգորը օրհնության պատարագ մատուցեց, ամենքին հաղորդություն տվեց գոհության խորհրդով, բոլորին բաշխեց սուրբ մարմինն ու պատվական արյունը ամենափրկիչ Քրիստոսի, որ Կենդանարարն է ու Կեցուցիչը ամեն մարդկանց, Արարիչն ու Աշխարհագործը բոլոր արարածների, եւ աստվածատուր շնորհներն ամենքին առատապես մատակարարեց»:

Արածանիի ափին՝ Նպատ լեռան լանջին գտնվող Բագավանում, Սուրբ Գրիգորը Ս. Հովհաննես-Տրդատ եկեղեցու հիմքը դրեց, որի մոտակայքում մինչեւ այսօր պահպանվել է Տրդատի անունով կոչված քարը՝ փորագրված խաչերով: Տողերիս հեղինակը 2000 թվականին ուխտագնացների խմբով գնացել է այդ վայրերը եւ վկայում է, որ Ս. Հովհաննես-Տրդատ եկեղեցին թուրք ոսոխն իրեն բնորոշ վայրենությամբ հիմնահատակ ավերել է, սակայն եկեղեցուց որոշ հեռավորության վրա պահպանվել է Տրդատի խաչակիր քարը՝ Նպատի լանջին՝ Արածանիին ափամերձ մի ժայռի մոտ:

Հայոց աշխարհում հորդում էր քրիստոսատուր քահանայապետ-եպիսկոպոսապետի հոգեւոր քարոզության լույսը: Ագաթանգեղոսը, նկարագրելով Մեծ Հայքում ու Փոքր Հայքում Սուրբ Գրիգոր Լուսավորչի գործունեության ամբողջացնող պատկերը, գրել է. «Ամբողջ Հայոց երկրում, ծայրից ծայր, ջանաց, սփռեց, տարածեց քարոզության ու ավետարանության գործը՝ Սատաղացիների քաղաքից մինչեւ Խաղտյաց երկիրը, Կղարջքի մոտ, ընդհուպ մինչեւ Մասքութների սահմանները, մինչեւ Ալանաց դռները, Կասպից սահմանները, Նոր Շիրական երկիրը, Կորդուք գավառը մինչեւ Մարաց ամուր աշխարհը, մինչեւ Մահքր-Տան իշխանի երկիրը եւ Աստրպատական՝ սփռում, տարածում էր իր ավետարանական քարոզը»:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ




Իր բնությամբ եկեղեցին սրբություն է, սակայն պատմականորեն իր զարգացմամբ ու իր ճակատագրով երկու առումով ողբերգական: Մի կողմից ողբերգական է, ինչպես կյանքը, ինչպես մահը, ինչպես հենց Իր՝ Քրիստոսի էջքը դժոխք, մյուս կողմից՝ ողբերգական է, քանզի այն ամենին, որ տրվել է մեզ, մենք մեր, ասել է թե՝ մարդկության ողջ պատմության ընթացքում, եղել ենք անարժան, անարժան՝ թե մեզ շնորհված կոչումին եւ թե՝ այն առաքելությանը, որ մեզ է պատկանում. այն է՝ լինել Կենդանի Աստծո զավակները, Նրա վկաները երկրի վրա, լինել Աստծո Արքայության սաղմերը եւ Աստծո այդ Արքայության ուժի մեջ մտած հայտնությունը:

Այդ իսկ պատճառով՝ առաջին հերթին ուզում եմ խոսել եկեղեցու մասին, այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում նա իր բնույթով: Եթե դուք դիմեք կատեխիզիսին, ապա կտեսնեք, որ այն բնորոշում է եկեղեցին որպես հանրություն, որն առանձնանում է մեկ միասնական հավատքով, մեկ միասնական խորհուրդներով եւ մեկ միասնական քահանայագործության հիմնադրույթով: Հանրություն, որ սովորել է ապրել այնպես, ինչպես ուսուցանել է Քրիստոսը: Սակայն նման տարբերակումը հասկանալի է լոկ նրանց, ովքեր քաջ գիտեն, թե ինչ է եկեղեցին, որովհետեւ ունենալ հավատքի միասնականություն ուղղակիորեն չի նշանակում ընդհանուր համայնություն դավանաբանական ձեւակերպումներում: Հավատը դա համոզվածությունն է աներեւութականի մեջ. «Ի՞նչ է հավատը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը եւ ապացույցն այն բաների, որոնք չեն երեւում» (Եբր. ԺԱ 1), դա մարդու ներքին փորձառությունն է, որը խոսում է այն մասին, ինչն արտահայտելի չէ, ինչը կարելի է միայն փորձով հասկանալ, եւ որը, ի վերջո, թաքնված է հայեցողական լռության մեջ: Խորհուրդներն արտաքնապես տեսանելի դառնալու համար կոչվում են ծեսեր, լավագույն դեպքում՝ խորհրդանիշներ, եւ հավատացյալի համար, որը կրկին փորձառությամբ է հաղորդվել դրանց բովանդակությանը, հանդիսանում են հաղորդակցություն աստվածային կյանքի եւ Հիսուս Քրիստոսի մարդեղության հետ: Իսկ ինչ վերաբերում է քահանայագործությանը, ապա շատ հեշտ է մտածել, թե իբր ի սկզբանե քահանայագործությունն է կանգնած եկեղեցական համայնքի գլխավերեւում, ինչպես օրինակ՝ ղեկավարվում են այլ միությունները՝ լինեն դրանք պետություն, բանակ թե ինչ-որ հասարակական կազմակերպություն: Նման զատորոշումն է պատճառը, որ առիթ է ընձեռում մարդկանց իրենց առջեւ միմիայն մի հարց բարձրացնելու, թե արդյոք դա ինչ միություն է, որ առանձնանում է լոկ նման տարօրինակ խոսքերով:

Իսկ հավատացյալի համար այդ խոսքերից յուրաքանչյուրն ունի խորին նշանակություն, որը բացահայտվում է աստիճանաբար եւ ողջ կյանքի ընթացքում գնալով ավելի խորանում, ընդարձակվում՝ դառնալով առավել լուսավոր, առավել շողարձակող եւ դրա հետ մեկտեղ՝ նրան կանգնեցնում աստվածային գաղտնիքների առջեւ, որոնց սուրբ Գրիգոր Նյուսացին կոչում է Աստվածային խավար, այսինքն՝ այնպիսի ապշեցնող լույս, երբ մարդը կորցնում է տեսնելու կարողությունը, եւ իր պատկերացումներից ու ընկալումներից դուրս եղածի հետ կարող է հաղորդակցվել միայն Աստծո միջոցով:

Որպես սկիզբ՝ կամենում եմ կանգ առնել որոշ արտահայտությունների վրա, որոնք բնորոշում են եկեղեցուն ոչ թե դրսից, այլ եկեղեցական բուն գիտակցության տեսանկյունից:

Ասենք, որ «եկեղեցի» բառը ծագել է հունարեն «կիրիակոն» բառից, որ նշանակում է Աստծո, Տիրոջ տուն: Սա ոչ միայն շինություն է՝ բաղկացած քարից կամ աղյուսից, այլ տուն է՝ կառուցված կենդանի քարից, որի մասին խոսում է Երեմիան իր Տեսիլքում: Նրան երեւացել էր, թե ինչպես Տիրոջ հրեշտակները կառուցում էին եկեղեցի, որը միաժամանակ ե՛ւ մարդկության, ե՛ւ Աստծո տուն էր, այնպիսի սուրբ, այնպիսի կատարյալ մարդկության տուն, որ համապատասխանում էր Աստծո տանը: Այդ հավերժական տունը բավականին խորն էր, հոգեւոր առումով բավականին ընդարձակ, բավականին սուրբ, որպեսզի նրա առաջին քաղաքացին լիներ Տերը եւ մեր Աստված Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, որը պիտի դառնար նաեւ մարդկության որդին: Սակայն երբ մենք խոսում ենք եկեղեցու մասին՝ որպես Աստծո տան, մեր կյանքի ենթատեքստում, մեր կյանքի ողբերգական փորձառության մեջ, հավանաբար, արժե մտածել այն մասին, որ Աստծո ստեղծած եւ մարդկանց մեղքի պատճառով նզովված այս աշխարհում տեղ չկա, որ Աստված իր գլուխը դնի: Նա անտուն է: Հայտնության գրքում ասվում է. «Կանգնել եմ դռների մոտ ու թակում եմ» (Հայտ. Գ 20): Այդ դուռը մարդկային սիրտն է, մարդկային միտքը, մարդկային կամքը, մարդկային կյանքը, եւ Աստված թակում է՝ ապաստան փնտրելով:

Սա առավել ակնհայտորեն կարելի է տեսնել այն երկրներում, ուր Աստծո համար տեղ չկա, այն երկրներում, ուր իշխում է անաստվածությունը, ուր Աստված բնակվելու իրավունք չունի: Այդ երկրներում հավատի, իսկ հաճախ մեր իսկ աչքերով կարող ենք տեսնել, թե ինչպես է Աստված Իրեն գտնում մարդկային սրտերում, մտքերում, կամքի մեջ, կյանքում, հենց մարդու մարմնի մեջ, ինչպես սրբերի մոտ էր: Բայց մենք կարող ենք տեսնել նաեւ, թե ինչպես հնուց ի վեր եւ այսօր, մեր անաստված հողում կառուցվում են տաճարներ, շինություններ, որոնք մարդկային հավատը բարձրացնում են հենց մարդու ձեռքերով, եւ այստեղ Աստված Իրենն Իր տանն է: Տաճարն ամենակարող Աստծո տուն-ապաստարանն է... Այդ տաճարները համեստ լինեն թե հոյաշեն, միեւնույն է, նրանք իրենց պատերի ներքո ամփոփում են Աստծո ներկայության ողջ բովանդակությունը:

Հիշում եմ՝ շատ տարիներ առաջ՝ 30-ականների կեսերին, Փարիզ եկավ մետրոպոլիտ Ելեւֆերի Լիտովսկին (Վիլենսկին): Նա այցելեց խրճիթների մեջ ծվարած մեր եկեղեցին: Այն այնքան փոքր էր, որ երբ սրբազանը ներս մտավ եւ կանգնեց Արքայական Դռան առաջ (բեմի պատկերակալի միջին դուռը օրթոդոքս եւ ռուս ուղղափառ եկեղեցիներում), նրա պատմուճանի փեշը մնաց մուտքի դռան մեջ: Մետրոպոլիտին դիմավորող հոգեւորականը շնորհակալություն հայտնեց նրան, որ այցելել էր նման համեստ, փոքրիկ եւ անշուք մի եկեղեցի: Սրբազանը սաստեց նրան՝ ասելով. «Երբեք Տիրոջ եկեղեցու մասին չասեք անշուք: Եկեղեցում բնակվում է Աստված՝ ամբողջությամբ: Ձեր եկեղեցին երկնքից մեծ է»:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶ ԵՐԱՆԻՆԵՐ

## Պարզ մեկնություններ պատանիների համար

*Սկիզբը՝ էջ 5*

Երբ ներում ենք մեր ընկերոջը, ով մեզ վատություն է արել, մոռանում ենք նրա արածը եւ չարին չարով չենք հատուցում, վրեժ չենք լուծում, մարդկանց չենք բամբասում ու վատաբանում, սա խոնարհություն է:

Երբ հնազանդ ենք նրանց, ում պարտավոր ենք հնազանդվել՝ ծնողներին, ուսուցիչներին, մեզանից մեծերին, նույնիսկ երբ հնազանդվում ենք միմյանց, այսինքն՝ նախընտրում ինչ-որ հարցերում զիջել մեր ընկերոջը եւ ոչ թե անպայման մեր կամքն առաջ տանել, սա խոնարհություն է:

Երբ հարգալից ենք մարդկանց հանդեպ, մեր գործը կատարում ենք բարեխղճությամբ, աղքատ ու թշվառ մարդկանց չենք ծաղրում, մարդկանց թերությունների վրա չենք ուրախանում, սա խոնարհություն է:

Խոնարհություն է նաեւ այն, որ երբ սխալ ենք թույլ տալիս, այն ընդունում ենք, ներողություն խնդրում եւ ոչ թե ամեն կերպ ջանում մեզ արդարացնել կամ նույնիսկ մեր մեղքն ուրիշի վրա գցել:

Նշանակում է՝ խոնարհության մեջ կան համարյա բոլոր առաքինությունները՝ սերը, ներողամտությունը, կարեկցանքը, համեստությունը եւ այլն:

**Խոնարհությունն արիություն է եւ ոչ թե թուլություն:**

Շատերը երբեմն կարծում են, թե խոնարհությունը թուլություն է:



Սակայն իսկական խոնարհությունը հերոսություն է եւ հերոսին հատուկ քաջություն է պահանջում, որը շատ քիչ մարդիկ ունեն:

Օրինակ՝ երբ մեզ վատություն են անում, եւ մենք ներում ենք, սրանից ավելի մեծ քաջություն չկա: Իսկ եթե վրեժ ենք լուծում, բամբասում ու չարախոսում, մեր սրտում ատում, նշանակում է՝ ուժ չունենք մեծահոգի եւ բարի լինելու, ուժ չունենք հասցված վիրավորանքը հաղթահարելու եւ արհամարհելու, արհամարհելու վիրավորանքը եւ ոչ թե այն հասցրած մարդուն: Եվ շատ մեծ թուլություն է, երբ սխալ ենք թույլ տալիս, վատ բան ենք անում եւ չենք կամենում այն ընդունել ու ներողություն խնդրել, այլ վախկոտի պես սկսում ենք մեզ արդարացնել ու սուտ խոսել:

Խոնարհ մարդն է, որ պատրաստ է հնազանդվելու ցանկացած հրամանի, եթե դա պահանջվում է հայրենիքի եւ ժողովրդի համար: Նա պատրաստ է հնազանդվելու նույնիսկ մահվան գնով, նա պատրաստ է անձնազոհության: Մի՞թե սա մեծ քաջություն չէ: Եվ անչափ մեծ քաջություն ու հերոսություն է սեփական ցանկությունը մի կողմ թողնելով՝ կատարել ուրիշինը, զիջել ուրիշին, սակայն սա անել ուրախությամբ ու սիրով:

Տեր Հիսուսն Ինքը շատ խոնարհ ու հնազանդ էր: Նրա մասին գրված է, որ երբ դեռ երեխա էր, հնազանդ էր Իր ծնողներին: Իսկ Ինքն Իր մասին ասում էր. *«Ես երկնքից իջա, ոչ թե որպեսզի Իմ կամքը կատարեմ, այլ Նրա, Ով Ինձ ուղարկեց»*, այսինքն՝ Հայր Աստծո: Եվ այդ նույն հնազանդությամբ էլ չարչարվեց ու խաչվեց մեզ համար: Որովհետեւ այդպես էր որոշել Նրա Հայրը:

Քրիստոնյան միայն մի դեպքում իրավունք ունի եւ նույնիսկ պարտավոր է չհնազանդվել: Քանի որ նա նախեւառաջ Աստծո ծառան է, ապա պիտի կատարի նախեւառաջ Աստծո հրամանները. երբ իրենից պահանջում են Աստծո պատվիրաններին հակառակը, այսինքն՝ չար ու տմարդի բաներ կատարել՝ ինչ-որ մեկին որեւէ վատություն անել, գողանալ, սպանել եւ այլն, նա չպիտի հնազանդվի: Նա կարող է սպանել միայն, եթե դրանով պիտի փրկի ուրիշների կյանքը: Ահա այդ պատճառով էլ պատերազմի ժամանակ նա թեեւ սպանում է թշնամուն, սակայն դա անում է, որպեսզի թշնամին, իր հայրենիքը գրավելով, չսպանի ու չկոտորի իր մերձավորներին ու ժողովրդին: Եվ երբ պետք է սրբությունն ու ճշմարտությունը պաշտպանել, քրիստոնյան ոչ ոքից ու ոչնչից չի վախենում, գիտի պաշտպանել Աստծուն, իր հայրենիքը, ծնողներին, եղբայրներին ու քույրերին, ընկերներին, աղքատ ու թշվառ կամ նեղության մեջ ընկած մարդկանց:

**Խոնարհությունը շատ մեծ առաքինություն է:**

Կատարելապես խոնարհ լինելը չափազանց դժվար է, քանի որ դա հավասար է կատարելության, այսինքն՝ երբ մարդ ոչ մի թերություն չի ունենում, ամեն ինչով կատարյալ է: Խոնարհ մարդը կատարում է Քրիստոսի բոլոր պատվիրանները: Խոնարհը նաեւ հեզ է, ողորմած, խաղաղարար, արդար, ճշմարտության ու արդարության մարտիկ: Դրա համար էլ Տեր Հիսուսն առաջին երանին տալիս է խոնարհին:

Իսկ ինչո՞ւ է խոնարհը կոչվում «հոգով աղքատ»: Որովհետեւ նրա հոգին չունի չարություններ ու թերություններ, շատ աղքատ է չարությամբ եւ հարուստ է բարությամբ:

Աստված ամենից շատ սիրում է խոնարհ մարդուն եւ ամենից շատ պարգեւների էլ հենց նրան է արժանացնում: Խոնարհությունն ամենամեծ առաքինությունն է. միայն խոնարհ մարդը կարող է իսկապես անշահախնդրորեն սիրել: Անշահախնդրորեն սիրել նշանակում է նախեւառաջ դիմացինի շահը փնտրել եւ ոչ թե սեփականը, այսինքն՝ կամենալ, որ նախեւառաջ դիմացինի համար լավ լինի, հետո՝ իր, հոգ չէ՛, թե ինքը փոքր-ինչ էլ նեղություն կրի: Եվ խոնարհ մարդն է միայն, որ կարող է հրաժարվել իր շահից, իր ցանկություններից, եթե դա պահանջվում է մի ուրիշի օգտի համար: Միայն խոնարհ մարդը կարող է սիրել այնպես, ինչպես ոչ թե իրեն է հաճելի, այլ դիմացինին: Միայն խոնարհ մարդը կարող է սիրել առանց փոխադարձ սիրո ակնկալիքի, այսինքն՝ նույնիսկ եթե իրեն չեն սիրում, ինքը շարունակում է սիրել, առանց դժգոհելու կամ չարանալու:

*Շարունակելի*

***Ս. Ս.***

# ՍԻՄԵՈՆ ԼԵՀԱՑՈՒ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուխտագնացությունը վաղ ժամանակներից եղել է քրիստոնյա հավատացյալների եւ մանավանդ հոգեւորականների բարեպաշտության, ջերմեռանդ հավատքի դրսեւորման ձեւերից, որի ընթացքում ուխտավորները այցելում էին սրբավայրեր եւ երկրպագությամբ ու աղոթքներով ձգտում արժանանալ «երկնային շնորհների»: Ուշ միջնադարի հայ ուխտավորներից ամենանշանավորը Սիմեոն դպիր Լեհացին է: Նա ծնվել է 1584 թ. Լեհաստանի Զամոսցա քաղաքում՝ Ղրիմի Կաֆա քաղաքից այստեղ տեղափոխված մահտեսի Մարտիրոսի եւ Դովլաթ խաթունի ընտանիքում: Կրթություն է ստանում «վարդապետների եւ բանասերների» ու հատկապես բանաստեղծ ու գրիչ Հակոբ Թոխաթեցու ղեկավարությամբ: Վաղ տարիքից հետաքրքրասեր պատանուն համակում է շրջելու, աշխարհ տեսնելու, հեռավոր սրբավայրեր այցելելու ցանկությունը: Այդ ջիղը, հավանաբար, ժառանգել էր հորից: Սակայն «տարաշխարհիկ լինելու» եւ ուխտավոր դառնալու հակումը նրա մոտ ձեւավորվում է ընթերցած գրքերի ազդեցությամբ: «Եվ բազում տարիներից եւ վաղուց ի վեր,- գրում է նա,- երբ ընթերցում էի Հարանց վարքը եւ վիպասանների պատմությունները, իմ սիրտը փափագ եւ ջերմ սեր ընկավ... շրջագայել եւ տարաշխարհիկ լինել օտար եւ անծանոթ գավառները եւ ի սփյուռս հեթանոսների: Այլեւ տենչում էի նաեւ ուխտի գնալ աստվածակոխ սուրբ Երուսաղեմ քաղաքը՝ Քրիստոսի լուսաբուխ գերեզմանին եւ այնտեղի մյուս փրկչական սուրբ վայրերին երկրպագելու: Եվ այնտեղից գնալ Մուշ, ուր նշխարներն են սուրբ Հովհաննես Մկրտչի, ապա մեծն Հռոմ, Պետրոսի ու Պողոսի եւ այլ մեծախումբ ու բազմահավաք սուրբ վկաների արյամբ ներկված գերեզմաններին այցելելու» (Սիմեոն Լեհացի, «Ուղեգրություն», Երեւան, 1997 թ., էջ 17):

Լեհացու ուխտագնացությունը նկարագրված է «Ուղեգրություն» աշխատության մեջ: Այն արժեքավոր տեղեկություններ է պարունակում այցելած վայրերի, տեղի բնակիչների սովորույթների, զբաղմունքի, կենցաղի վերաբերյալ, սակայն առանձնապես աչքի է ընկնում քրիստոնեական սրբավայրերի, այնտեղ պահվող մասունքների, նրանց հետ կապված ավանդությունների հիշատակումներով, որն էլ ստեղծագործությանը տալիս է որոշակի ուղղվածություն: Այդ տեսանկյունից Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունը» կարող է համարվել նաեւ ուխտավորի օրագիր-հիշատակարան եւ արժեքավոր ուղեցույց է ուրիշ ուխտավորների համար: Եվ, իրոք, Սիմեոն Լեհացու ճանապարհորդությունը միայն հետաքրքրասեր երազողի բաղձանք չէր, այլ ուներ որոշակի նպատակ եւ նախապես ծրագրված հստակ երթուղի, որը նրան առաջնորդելու էր քրիստոնեական այն հռչակավոր սրբատեղիները, որոնք առնչվում էին Հիսուս Քրիստոսի, առաքյալների, քրիստոնեական հավատի խոշորագույն գործիչների կենսագրության հետ:

Սիմեոն Լեհացու ճանապարհորդությունը սկսվում է 1608 թ. փետրվարի 15-ին: Դուրս գալով Լվովից եւ անցնելով մի շարք բնակավայրեր՝ նա հասնում է Կ. Պոլիս: Այստեղ առանձնապես զմայլվում է Սբ. Սոֆիայի տաճարի վեհաշուք տեսքով: Տաճարի նկատմամբ մեծ հետաքրքրության պատճառներից մեկն էլ այն էր, որ գրքերից նրան հայտնի էր դարձել այս սրբավայրում Գրիգոր Լուսավորչի նշխարների գոյության մասին: Բարձրանալով տաճարի վերնատուն՝ նա տեսնում է շինության երբեմնի վեհությունն ընդգծող «արվեստի զարմանալի գործեր»: «Այնտեղ,- գրում է նա,- տեսանք Քրիստոսի տնօրինականները նկարված, այլեւ ամենաօրհնյալ կույս Մարիամի, նաեւ սուրբ առաքյալների, մարգարեների, հայրապետների ու այլ սրբերի պատկերները, որոնք անօրենները եղծել ու ավերել էին, եւ միայն նշմարներն էին երեւում»:

Լեհացին շրջում է նաեւ Էգեյան եւ Մարմարա ծովերի ափամերձ սրբավայրերում: Մուդանիա նավահանգստում նա տեսնում է «այն բաղնիքը, ուր Հովհաննես Ավետարանիչը բաղնեպան էր», իսկ Պատմոս կղզու մասին գրում է, որ այնտեղ «տեսնելով տեսիլ՝ Հովհաննեսը գրեց Ավետարանը»: Առանձին խանդաղատանքով է նկարագրում հայ սրբերի հետ կապված հիշողությունները՝ միաժամանակ ցույց տալով, որ նրանք հայտնի էին նաեւ Հայաստանից դուրս: Այսպես. Նիկիա քաղաքի շրջակայքում տեսնում է այն լիճը, ուր «Արիստակես հայրապետը՝ Լուսավորչի որդին, ակոս վարեց եզներով, ու մինչեւ օրս երեւում են ջրի վրա ակոսների տեղերը, որպես երկնքում պատռած ջրհորդան, որտեղից անձրեւ տեղաց»: Վերադառնալով Կ. Պոլիս՝ Սիմոնը հանդիպում է այն կղզուն, «ուր պիղծ Վաղես կայսրը ձգեց սուրբ Ներսեսին (Ներսես Ա Պարթեւ - Վ. Կ.) ծովը»:

Հայոց հայրապետների մասին հնուց գոյություն ունեցող այս ավանդությունները պատմվում էին նաեւ հետագայում: Հր. Աճառյանը վկայում է, որ Նիկիայի լճի շրջակայքի հայ գյուղացիները «այսօր էլ.... նույն լիճը կոչում են «Արիստակեսի լիճ», իսկ Ներսեսի աքսորավայրի մասին գրում է, որ իր աշակերտ եղած ժամանակ (19-րդ դարի 80-ական թվականներ - Վ. Կ.) ցույց էին տալիս Մարմարա ծովում գտնվող մի անմարդաբնակ կղզի, ուր աքսորվել էր Ներսեսը:

Սիմեոն Լեհացին ծրագրել էր Կ. Պոլսից անցնել Հայաստան եւ այցելել Մշո Սբ. Կարապետի վանք, սակայն տեղեկանալով այնտեղ տիրող պատերազմական խառնաշփոթության մասին՝ հետաձգում է ճանապարհորդությունը եւ մեկնում Եվրոպա: Վենետիկում այցելում է Մարկոս ավետարանչի հռչակավոր եկեղեցի եւ իր գրքում մանրամասնորեն նկարագրում այն: Խոսում է սրբավայրի անպատմելի ճոխության ու հարստության մասին եւ հիացած այս ամենով՝ փառաբանում է Աստծուն, որ «այսպիսի փառք ու մեծություն եւ պերճ ճոխություն եւ իշխանություն է տվել քրիստոնյաներին»: Միաժամանակ ցավ է ապրում իր ժողովրդի վշտալի կյանքի համար, քանի որ «այս ամենից զրկված ենք ու գերի դարձած այլազգիներին եւ տաճիկներին»:



Հռոմ գնալու ճանապարհին Լեհացին այցելում է «մեծահռչակ ու փառավոր» Մադոնա դե Լորետ սրբավայրը, որը խոշոր սրբատեղի էր, եւ ամեն օր այնտեղ «հինգ, վեց հազար հոգի ուխտի են գալիս, եւ ցերեկը չես կարող մտնել ներս՝ ամբոխի շատության պատճառով»: Հայ ուխտավորին հաջողվում է վանք մտնել գիշերով եւ երկրպագել սրբերին: Հասնելով Հռոմ՝ Սիմեոն Լեհացին այնտեղ մնում է յոթ ամիս եւ այցելում քաղաքի ու շրջակայքի սրբավայրերը: Լինում է աշխարհահռչակ Սբ. Պետրոս եկեղեցում, այցելում Քրիստոսի սիրելի աշակերտի շիրիմին եւ երկրպագություններ կատարում: Գոհացած այդ ամենով՝ նա գրում է. «Ուխտը կատարեցինք, մեր բաղձանքին հասանք»: Այնուհետեւ իր ուղեկիցների հետ Լեհացին այցելում է ուրիշ սրբավայրեր, նրանց մասին լսում զանազան ավանդազրույցներ, որոնք գրի են առնված «Ուղեգրության» մեջ: Այդպիսի մի սրբատեղի էր Պետրոսի եւ Պողոսի հանդիպման վայրում կառուցված մատուռը, որի դռան վերեւի մասում պատկերված էին երկու առաքյալները՝ համբուրվելիս: «Ասացին,- գրում է նա,- երբ Պողոսին տանում էին գլխատելու, այստեղ հանդիպեց Պետրոսին: Իրար տեսնելով... համբուրեցին միմյանց ու հրաժեշտ տվին»: Այդտեղից քիչ հեռու գտնվում էր Պողոսի գլխատման վայրը: Ապա ուխտը շարունակվում է Պետրոսի բանտարկության վայրում՝ Մամերտինի բանտ-եկեղեցում, որտեղ ուխտավորներին ցուցադրում են սրբի շղթաները ու կապանքները, դրանք «ահով ու երկյուղածությամբ եւ աղոթքով» անցկացնում նրանց վիզը: Ուխտագնացության ընթացքում Սիմեոն Լեհացին լինում է նաեւ Սբ. Լորենցիո, Սբ. Ուրբանոս, Սանտա-Գրոշ, Գրիգոր Ակռակոնտացու եւ ուրիշ սրբավայրերում, երկրպագում սրբերին, լսում հրաշապատում զրույցներ:

*Շարունակությունը՝ էջ 8*

